

Ե.

Ըսի ձեզի, թէ Մատթէոս-Արտաշէս-Սերգէյ Մելիք-խանեանց իրական անձնաւորութիւն մըն է: Անխրական պատմութեամբ մը սակայն:

1902ին, Կասպականէն մինչեւ Պրոպէնտէս (Մաթիկ Մելիքխանեանց ճեմարանական, շատ խնամքով սորված էր Մերձաւոր ու Միջին Արեւելքներու հնախօսութիւնը, տեղագրական անուններու հին կոչումն ալ գործածելէ ախորժող, գիտութեան մարդու սովորութիւն դարձած խղճատութեան պատճառով), ամբողջ Կովկասը, Հայաստանը, Փոքր Հայքը, Կապադովկիան կտրող-անցնող սանոր Մարգօ-Փոլոն այնքան շահեկան թուեցաւ ինծի, որքան միջնադարու վենետիկցին: Ո՞ր հրաշքը պաշտպանած էր զինքը, որպէսզի Այրարատէն Վասպուրական, Սասունէն Կիլիկիա, Իկոնիայէն Բիւթանիա, միշտ հետի, զինանշանի մը մէկ բաղկացուցիչ մասին նման սուր իր մօրուքը կզակին ամրասեւեռ, հասնէր ինծի «ողջ ու առողջ», զուարթ ու խանդավառ: Հիմա ատոր վրայ մտածելն իսկ սարսափ կու տայ ինծի: Բայց աշխարհը մեծ, պարզ իր օրէնքներուն հետ, քով ունի ուրիշներ, անսովոր, անմատոյց, որոնք նոյնքան ճակատագրական են ու